

**Հին ՀԱՅԵՐԵՆԻ Ը (R), Ռ (R̄) ՆԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ Մ (M), Ն (N)
ՌՆԳԱՅԻՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՀՆՉԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր – վանկարար և ոչ վանկարար ձայնորդներ, նայական, ռնգային, բնիկ հայերեն, վաղնջահայերեն, նախահայերեն, սկզբնային վաղնջական (հայերեն), ուշ վաղնջական (հայերեն), ենթահնչույթ, հնչույթայնացում

Հին հայերենի $p(r)$, $m(r̄)$ նայական¹ և $u(m)$, $n(n)$ ռնգային ձայնորդների ծագումնաբանության հարցը պատմահամեմատական հայերենագիտության մեջ առանձնապես տարակարծություններ չի հարուցել: Առկա պատկերացումների համաձայն՝ հին հայերենի $p(r)$ և $m(r̄)$ ձայնորդները սերում են հնդեվրոպական (այսուհետև՝ հ.-ե.) * r ձայնորդից, առանձին դեպքերում $p(r)$ -ն՝ նաև * l -ից, իսկ $u(m)$ և $n(n)$ ռնգայինները, համապատասխանաբար, հ.-ե. * m և * n ձայնորդներից: Այդ առումով հայերենը, ինչպես և հ.-ե. լեզուների գերակշիռ մեծամասնությունը, հիմնականում արտացոլում է նախահնդեվրոպական դրությունը: Սակայն, ընդհանուր համապատասխանությամբ հանդերձ, հ.-ե. նայական և ռնգային հնչույթների հայկական ռեֆլեքսներն ունեցել են դրսևորման յուրահատկություններ, որոնց քննությունը կարևոր նշանակություն ունի հին հայերենի պատմական հնչույթաբանության համար:

Ը (r) և Ռ (r̄) նայականներ: Ի տարբերություն հ.-ե. ցեղակիցների, որոնցում (բացառությամբ հնդիրանականների²) ընդհանուր առմամբ առկա է * $r > [r̄]$ համապատասխանություն, իսկ $[r̄]$ -ն կարող է հանդես գալ միայն հնչյունական (= այլահնչակային) արժեքով՝ իբրև $\langle R \rangle$ հնչույթի դիրքային տարբերակներից մեկը (հմմտ. ոս. poza [ʔoza] «վարդ», բայց peka [rʔika] «գետ», pechʔ [rʔeʔ] «խոսք, ճառ»), ապա հին հայերենում հ.-ե. * r -ն ներկայացված է երկու հնչույթով՝ $p(r)$ (հմմտ. * ar - mo -> *արմ(-ուկն)*, * $bhere$ -> *բերեմ*, * pur -> *հուր*)

¹ Հին հայերենի $l(l)$ և $n(n)$ նայականների տարածամանակյա և համաժամանակյա հնչաբանական բնութագրերին անդրադարձել ենք առանձին հոդվածով (տե՛ս **Պետրոսյան Վ. Ջ.**, Հին հայերենի $l(l)$ և $n(n)$ ձայնորդների ծագումը և հնչաբանական արժեքայնությունը // ՎԷՄ, 2017, թիվ 3, էջ 97-105):

² Հին պարսկերենում r -ն կարող է լինել ինչպես հ.-ե. * r -ի, այնպես էլ * l -ի ռեֆլեքսը, իսկ «հին հնդկերենում բարբառների խառնվելու հետևանքով սկզբնական դրությունն այնքան է մթազնել, որ ինչպես l -ն, այնպես էլ r -ն կարող են համապատասխանել հ.-ե. r -ին և l -ին» (տե՛ս **Семереньи О.**, Введение в сравнительное языкознание, М., 1980, с. 56: Հմմտ. նաև **Савченко А. Н.**, Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, с. 76):

և *n* (*r*) (հմմտ. *bhōr->*բուռն*, *dhur-(no-?)>*դուռն*, *sru-t->*սուռ* ևն): Որ հայերենի գրաբարյան փուլում *p* (*r*) և *n* (*r*) ձայնորդները եղել են ինքնուրույն հնչույթներ, այլ ոչ թե միևնույն հնչույթի ենթահնչույթները, վկայում են հետևյալ հնչույթաբանական հակադրությունները (հմմտ. *արու-սուռ*, *բար-բառ*, *բարք* «բնավորություն, վարք»-*բառք* «բառեր», *գայր* «(նա) գալիս էր» (անց. անկ. ժ., եզ. թ., 3-րդ դ.) - *գայռ* «ցեխ, աղբ», *կրունկ-կռունկ* ևն): Հին հայերենի պատմական հնչույթաբանության խնդիրներից է բացատրել, թե երբ և ինչպես են առաջացել այդ երկու հնչույթները: Այն է՝ հին հայերենի *p* (*r*) և *n* (*r*) հնչույթներն առաջացել են հ.-ե. *r-ի դիրքային բաշխումով՝ նախալեզվից հայերենին անցման փուլում, թե՛ դրանցից մեկն առաջացել է ավելի ուշ՝ հայերենի ինքնուրույն զարգացման պատմության ընթացքում: Եթե հիմք ընդունվի *r>*p* և *r>*n* անցումների քանակական հարաբերակցությունը՝ իրենց վանկարար և ոչ վանկարար տարբերակներով (հմմտ. *r>*p*՝ 272, *r>*n*՝ 80, *r>*ար*՝ 40, *r>*ան*՝ 14)¹, ապա հայերենում հ.-ե. *r-ի հիմնական ներկայացուցիչ պիտի համարել *p* (*r*)-ն², իսկ *n* (*r*)-ին վերագրել ավելի ուշ ծագում՝ հայերենի նախագրային զագացման, հնարավոր է՝ դեռևս վաղնջահայերենի փուլում՝ *p*-ի և որևէ այլ հնչույթի, օրինակ՝ *ն*-ի փոխադրեցության արդյունքում³: Վերջին մտքի համար հիմք կարող է լինել այն, որ զգալի թվով բնիկ հայերեն բառերում *n* -ն հանդիպում է հենց *ն*-ին նախորդող դիրքում (հմմտ. *ամսոն*, *սոն*, *սոնեմ*, *բեռն*, *բուռն*, *գառն*, *դառն*, *եղեռն*⁴, *ընթեռնում*, *թիթեռն*, *թոռն*, *լեռոն*, *ծիծառն*, *կոնչեմ* «կծկվել, կուչ գալ, գալարվել» (<*g(e)-ren-ki-?), *կուռն*, *ձեռն*, *մսոն*,

¹ Վիճակագրական հաշվումներն ըստ Գ. Բ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» (Երևան, 1987) գրքի (այսուհետև՝ **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ), տե՛ս էջ 111-157:

² Ըստ էության, Հ. Մուրադյանը *p*-ի և *n*-ի կիրառական հաճախականությունը նկատի ունենալով է հ.-ե. *r-ի հիմնական ռեֆլեքս համարել *p*-ն (տե՛ս **Մուրադյան Հ. Դ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Երևան, 1982, էջ 220):

³ Ըստ Ն. Մառի՝ հին հայերենի *n* (*r*)-ն իրենից ներկայացնում է *p*-ի և նախորդող կամ հաջորդող *h*-ի միաձուլում (հմմտ. *սոնեմ*՝ փինկ **արհնեմ* (<**արրնեմ*), *ձմեռն* <**demeahrayn* (<**zāmāsθān*)) (տե՛ս **Մարր Կ.**, Грамматика древнеармянского языка: этимология, СПб., 1903, с. 29-30): Ըստ Գ. Ջահուկյանի նույնպես «*p+h=n*»/«*r+h=i*» անցում է տեղի ունեցել, բայց՝ հ.-ե. *r-ից հետո և առաջ *s-ի ընկնելու արդյունքում (տե՛ս **Ջաуқян Г. Б.**, Очерки по дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 213, 216): Սակայն ինչ վերաբերում է Ն. Մառի առաջարկած նախաձևերին, պարզ չէ՝ նա դրանք վերագրում է հայերենի՞ նախագրային փուլին, թե՛ համարում է նախալեզվյան: Նախալեզվյան համարվելու դեպքում պատկերն ավելի է խճճվում, որովհետև այդ նախալեզուն, Ն. Մառի կարծիքով, մեկը չէր. հայերենը, ըստ նրա, հնդեվրոպականի և «ինչ-որ անհայտ լեզվաբանական ընտանիքի» «անխզելի ձուլվածք» է (նույն տեղում, էջ XXXI):

⁴ Այս բառը Հ. Աճառյանը դասում է չստուգաբանվածների մեջ (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ **Աճառյան Հ.**, ՀԱԲ), հ. II, Երևան, 1973, էջ 17), իսկ Գ. Ջահուկյանը հնարավոր է համարել նրա հ.-ե. ծագումը (տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ, էջ 121, **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ **Ջահուկյան Գ.**, ՀԱԲ), Երևան, 2010, էջ 213):

ոռնամ, ջեռնում, սառն, սեռն ? (<*k' er-no), *սիսեռն, տոռն* «սանդի կոթ» (<*doru-(no-?)), *փռնգամ / փռնչեմ* «ձիու փռնչալը, խրխնջոց») և *ն*-ի առնմանական ազդեցությամբ *ր*-ն կարող էր վերածվել *ռ*-ի: Բայց փոքր չէ նաև այն բառերի թիվը, որոնցում *ռ*-ն չի գտնվում *ն*-ի անմիջական հարևանությամբ կամ այդ բառերն առհասարակ *ն* չունեն (հմմտ. *ագռալ, բառ, բռռ, գայր* «ցեխ, տիղմ, աղբ» (<*ǰr̥sij-?), *գեռ* «ործկալը» (<*ǰers), *գռռ* «գոչյուն, բղավոց» (<*ǰors/ghor-s), *դռոյթ* «խմբային հարձակում, գրոհ» (<*dhērs-/dhōrs-?), *եռամ, լռւռ, ծառ, ծուռ, կռաւել, կռինչ'* (?) «թույլ ճիչ, ձայն» (*g(ē)renki-), *կռկիլ* «կծկվել, կուչ գալ», *ձառ* «կոպիտ, խոշոր, տգեղ», *մառ, մեռանիմ, մռայլ, մռունչ, ռունզն* (<*srongh-?), *սեռ (-ի)* (<*ker-si-), *քառորդ* ն): Ավելին՝ առանձին դեպքերում *ր* (r)-ն անմիջականորեն հաջորդում է *ն*-ին (հմմտ. *ծունր* (-ու) <*ǰ onu-, *մանր* (-ու) <*m̥nu): Բնիկ հ. - ե. բառերում ինչպես «ռ+ն», այնպես էլ «ռ+այլ հնչույթ» հաջորդականությամբ բառերի թիվը, ըստ վերոհիշյալ բառացանկի, գրեթե հավասար է, հետևաբար միայն քանակական չափորոշիչը բավարար չէ օրինաչափություն սահմանելու համար: Ավելին, տարբերակներից մեկի քանակական գերակշռությունը կարող է նաև ուշ շրջանի երևույթ լինել՝ իբրև հնչյունաբանական տարբեր գործընթացների հետևանք: Իհարկե, ճիշտ չէ նաև այն միտումի անտեսումը, որ *ն*-ին նախորդող դիրքում *ր* (r)-ն գրեթե չի հանդիպում², այն դեպքում, երբ *ռ* (r̥)-ն հանդիպում է այդ հնչույթն ունեցող բնիկ հայերեն բառերի մոտ կեսում: Ոչ մեծ թվով բառերում *ր* (r)-ն հանդիպում է ոնգային *մ* (m)-ին նախորդող դիրքում (հմմտ. *որմ, արմ(-ատ), արմն / արմեն, սերմ(ն), թարմ, թուրմ*)³: Այդ միտումի լրացուցիչ վկայություններ են *ամառն-ամարան, առնեմ-արարի, բառնամ-բարձի, դուռն-դուրք // դրունք, դառնամ-դարձ, եղեռն-եղերան, ընթեռնում-ընթերցայ, ձմեռն-ձմերան, ձեռն-ձերբ(-ակալ)⁴, մատուռն⁵-մատրան, ջեռնում // ջերմ* տիպի ձևահնչույթաբանական հերթագայությունները, երբ մինևույն արմատի կազմում *ն*-ին անմիջականորեն նախորդող դիրքում առկա է գերազանցապես *ռ* (r̥), իսկ մյուս

¹ Հ. Աճառյանը համարել է բնաձայնական բառ (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հ. II, էջ 669-670), իսկ Գ. Ջահուկյանը, չմերժելով այդ տեսակետը, չի բացառում «կռի(ն)»ի կապը հ. - ե. «*ger-բնաձայնական արմատի հետ», որից առաջացել է նաև *կռունկ* բառը (տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀԱԲ, էջ 430-431):

² Ըստ Հ. Պեղերսընի՝ «*ր* եւ *ն* բաղաձայններուն միջեւ» գտնվող *ու* կամ *ի* ձայնավորի կորուստը չի հանգեցնում *ր* // *ռ* հերթագայության. հմմտ. *գարուն-գարնան* (**Պեղերսըն Հ.**, Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 35):

³ Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ, էջ 111-157:

⁴ *Չերբ* -ը եղել է եգ. գրծ. հին ձևը հայերենում, որից կազմվել են բարդությունները: Գրաբարյան ձևն էր *ձեռամբ* (տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետև՝ ԼՔՀԼ), հ. III, Երևան, 1957, էջ 414):

⁵ Փոխառություն է հուն. μαρτύριον «վկայարան» բառից (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հ. 3, Երևան, էջ 271), ըստ էության՝ նույնպես հնդեվրոպական:

դիրքերում, այդ թվում՝ *ւ*-ին նախորդող, առկա է *ր* (*r*)¹:

Նշված հարցերին պատասխանելու համար երկրորդական չէ ոնգային -*ն* վերջնահանգով (այդ թվում՝ -*ռն*-ով) բնիկ հայերեն բառերի -*ն*-ի հնդեվրոպական, թե՛ ավելի ուշ՝ հայկական ծագում ունենալու հարցը: Ա. Մեյեն վերջնահանգ -*ռն*-ով բառերի -*ն*-ն հակված է բացատրելու որպես *հ*.-*ե*. եզ. թ. հայցականի համաբանությամբ ուղղականին անցած *ձ*, ավելի ճիշտ՝ հայցականի գործածություն ուղղականի նշանակությամբ: Ըստ այդմ՝ նա *ղուռն* բառի համար հնարավոր է համարել **dhur* նախաձևի վերականգնումը (հմմտ. «... ոչ մի արգելք չկա, որ **dhur* -ը ենթադրենք իբրև այն *ձ*ը, որից անմիջականորեն ծագում է *ղուռն*-ը»), չնայած այն հանգամանքին, որ «**dhur*-ը հնդեվրոպական *ձ*ն չէ»²: Ըստ ամենայնի, Ա. Մեյեն **dhur*-ը վերականգնում է որպես *նախահայերենի* կամ *վաղնջահայերենի* *ձ*³:

«Դուռ» նշանակությամբ *հ*.-*ե*. նախալեզվում վերականգնվում է երկու նախաձև՝ **dhur*- և **dhur*-, որոնցից երկրորդը՝ նաև հայերեն *ղուռն*-ի համար: Այդ բառը նախալեզվում պիտի ենթարկվեր բնավոր հիմքով հոլովման, հետևաբար եզ. *հյց*.-ում կունենար **dhur*-om կամ **dhur*-m *ձ*ը⁴: Իհարկե, *հ*.-*ե*. **m*>*hj*. -*ն* (հմմտ. **dom*->*տուռն*, **g*'*hi*ǰōm >*ձիռն*, **k*^h*am*⁵>*քան*, **em*(*e*)- *ǰ* *h*(*i*)>*ինձ*, **sim* *ǰ* *h*->*ինձ*), *հ*.-*ե*. **m*>*hj*. -*ան*/(*ը*)*ն* (հմմտ. **dkm*₃>*տաս(ը)ն*, **sm*-*d*ǰru-?>*անտաս*, **sm*-*nu*-*mi*?>*հանու*/(*-եմ*), **septm*₃>*եթ(ը)ն*/(*եաթ(ը)ն*)) անցումների համապատասխանությամբ հայերենի ինքնուրույն զարգացման վաղ փուլի, օր. վաղնջահայերենի համար հնարավոր է ենթադրել **dhur* նախաձև: Այդպիսի նախաձև հնարավոր կլիներ ենթադրել նաև *հ*.-*ե*. փուլի համար, եթե *ղուռն*-ը ունենար բաղաձայնական հիմք, ինչպիսիք են, օր. *բենն* (<**bher*-no՝ **bher*- ից «բերել»), *թեկն* (<**toig*^h-no-), *եղն* (<**el*-no) բառերը, համապատասխանաբար՝ ենթարկվեր բաղաձայնական հիմքով հոլովման: Գ. Ջահուկյանը *ղուռն*-ի համար առաջարկել է **-no* ածանցով նախաձև, այն է՝ **dhur*-(no-?)⁶, այդպիսով նրան վերագրելով նույնպիսի կազմություն, ինչպես որ *բենն*, *թեկն*, *եղն* և այլ բառերի նախաձևերին: Ըստ Գ. Ջահուկյանի՝ **o*-ի ընկնելու

¹ Որոշ բառեր գրաբարում, պիտի ենթադրել նաև նախագրաբարյան հայերենում, եզ. թ. սեռ.-տր. *հլ*. գործառել են *ր* (*r*)/*ռ* (*r*) զուգաձևերով (հմմտ. *ամարան-ամառան*, *եղերան-եղեռան*, *ողորան-ողորան*), բայց *հզն*. թ. ունեցել են միայն *ր*(*r*) (հմմտ. *ամարունք*, *եղերունք*, *ողորունք*), ինչը նշանակում է, որ թեք ձևերի համար օրինաչափը *ր* (*r*)-ով *ձ*ն էր, իսկ *ռ* (*r*)-ով *ձ*ները, թերևս, ուղղականի *ձ*նի համաբանության արդյունք են:

² Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 264: Հմմտ. նաև Meillet A., Esquisse d'un grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 79-80:

³ «Նախահայերեն» և «վաղնջահայերեն» տերմինները գործածում ենք ըստ Գ. Ջահուկյանի ժամանակագրական շրջանաբաժանման (տե՛ս Գ. Ջահուկյան Գ. Բ., ՀԼՊՆԺ, էջ 25):

⁴ Տե՛ս Семереньи О., նշվ. աշխ., էջ 170, 193-199, Савченко А. Н., նշվ. աշխ., էջ 192:

⁵ Հ. Աճառյանը նշում է **k*²*ān*, այսինքն՝ **n*-ով *ձ*ն, այլ ոչ թե՛ **m*-ով (տե՛ս Աճառյան Հ., ԼՔՀԼ, *հ*. VI, Երևան, 1971, էջ 505):

⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան Գ. Բ., ՀԼՊՆԺ, էջ 120:

պատճառով այդ բառերի *-ն*-ն «գիտակցվել է որպես հիմքակազմ տարր»¹: Նրա կարծիքով ևս այդ կարգի բառերի եզ. ուղղ. *-ն* վերջնահնչյունն առաջացել է հյգ. *m(*n) վերջավորության համաբանությամբ²:

Չնայած որ հին հայերենի ռնգային *-ն* վերջով ոչ բոլոր բառերի *-ն*-ն է գալիս հ.-ե. շրջանից³, մեզ հետաքրքրող խնդրի տեսանկյունից, սակայն, դա սկզբունքային նշանակություն չունի, որովհետև *-ն*-ին նախորդող դիրքում *ռ*-ի առկայության միտումը կարող էր տարածվել և ընդհանրական դառնալ հենց հայերենի ձևավորման նախնական *սկզբնային վաղնջական* փուլում, որը, ըստ Գ. Ջահուկյանի առաջարկած շրջանաբաժանման, ներառում է մ. թ. ա. III հազարամյակը⁴:

Տեղակից և ոչ տեղակից լեզուներից հայերենի կատարած փոխառություններում ևս օտար *ռ*-ի դիմաց հայերենը ունի ինչպես *ռ* (*ռ*) խմբ. **խեթ.-հյ.** (*purut*- «կավ»>*բրուտ*, *kurka*- «ծածկոց»>*գորգ*, *paršur*->*փշուր*), **ուրարտ.-հյ.** (*auri* «տեր»>*ալրիորդ* «օրիորդ»⁵, *šerd*- «բաժանել, առանձնացնել»>*շերտ*, *շերտեմ*, *uruli* «հոգի»⁶>*ուրու* «տեսիլք, ցնորք», *armuzi* «սերունդ», «ընտանիք»>*արմ*, *արմատ*, *գ-արմ* ևն), **սեմ. լեզուներ -հյ.** (ասոր. *harglā* «մորեխ»>*խարագուլ* «մանր մորեխ», ասոր. *kōra* (>հուն. *χώρα*)>*քորայ* «երկիր», արամ. (ասոր.) *dārā*, *dār*, ակկադ. *dāru(m)* «տնտեսություն, հավիտենություն»> *դար* (-ու), արամ. (ասոր.) *hārbā*>*խարբ* (-ի) «սուր, թուր», ասոր. *baqrā*, եբր. *bāqar* «արջառ, կով, ցուլ», արաբ. *ba(qa)ra(t)* «եզ. կով» - *պախրե* (-ի), ուշ *պախրայ*, արամ. *kūr(ā)*, ասոր. *kūrā*, եբր. *kūr*, ակկադ. *kūru(m)*>*քուրմ* ևն), **իրան. լ.-հյ.** (ավ. *xšaθra*- «թագավորություն», պհլ. *šahr*, մ. պ. *šahr* «երկիր, նահանգ, քաղաք», պ. *šahr* «քաղաք»> *աշխարհ* (ի-ա), ավ. *rayu*, պրթ. *rg*>*արագ*, *երագ*, մ.պ. *panīr*, *panēr*, պ. *panīr*>հյ. *պանիր*, իրան. *vars*>*վարս* ևն), **փոյուզ.-հյ.** (*Αραση* (տեղանուն)> *Արաքս* (*Արասիս*, *Երասիս*), *ἄρμα* «կռիվ»>*արմեն* (ցեղանուն), *Արա* (անձնանուն)⁷ ևն),

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 255:

² Նույն տեղում, էջ 257-258:

³ Հին հայերենի ձայնորդահանգ *-ն*-ով այն բառերը, որոնք հզն. թ. հոլովական հարացույցում *-ն* չունեն կամ հոլովվում են նաև առանց *-ն*-ի, ըստ Հ. Աճառյանի, հ.-ե. նախալեզվում *-ն*-ով բուն, այսինքն՝ հիմք չեն ունեցել: Դրանցից է նաև *դուռն* բառը, որի հզն. թ. հլ. հարացույցը նախապես եղել է *դուրբ*, *դուրս*, *դրաց*, *դրալք*: Այդպես նաև *ոտն*, *ձեռն* բառերի հզն. թ. հլ. հարացույցը (տե՛ս Աճառյան Հ., ԼԹՀԼ, հ. III, էջ 414):

⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան Գ. Բ., ՀԼՊՆԺ, էջ 25:

⁵ Ըստ Գ. Ղափանցյանի՝ *ալրի* «տեր»+*որդ(ի)* կազմությունից (տե՛ս Ղափանցյան Գ. Ա., Հայոց լեզվի պատմություն. հին շրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Երևան, 1961, էջ 134): Հ. Պեղերսընը այդ բառի ստուգաբանությունը համարել է «մթին» (տե՛ս Պեղերսըն Հ., նշվ. աշխ., էջ 46), իսկ Գ. Ջահուկյանը ավելի հավանական է համարել հ.-ե. *rou- «փոքր գավակ, ձագ»>*ալր-* (+որդի) կազմությունը (տե՛ս Գ. Ջահուկյան Գ., ՀՄԲ, էջ 104):

⁶ Տե՛ս Ղափանցյան Գ. Ա., ՀԼՊՆԺ, էջ 138: Գ. Ջահուկյանն այդ ստուգաբանությունը կասկածելի է համարում (տե՛ս Գ. Ջահուկյան Գ. Բ., ՀԼՊՆԺ, էջ 429):

⁷ Փոյուզերեն-հայերեն օրինակները տե՛ս Գ. Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 116-117:

հուն.-հյ. (ἀνδράς>անդրի «արձան», βάρβαρος> բարբարոս (-ի), λίτρα>լիտր, τομάριον>տոմար (-ի), κίτρον>կիտրոն նն), **լատ.-հյ.** (caesar>կայսր, arcula>արկղ, margarita>մարգարիտ նն)}, այնպես էլ *n* (r) {հմմտ.. **լեթ.-հյ.** (ġarnamniġa->խառն, խուռն «ամբոխ, բազմություն», šehur>շեռ «մեզ», tarlā>տառեղն «արագիլ»), **ուրարտ.-հյ.** (Giarniani>Գառնի (հմմտ. garini «բերդ, ամրոց»), **սեմ. 1.-հյ.** (ասոր.. arnā'a>առնէտ, ակկադ. gišrinnu(m) «կշեռք»>կշիռ (-ոյ) «կշիռ, կշռադաստություն», արաբ. ĵazūr «ուղտ, ուղտի ձագ»>կոզեռ «երեխա, մանուկ», կոզեռն «ուղտի ձագ», ասոր. rhiṭōrā (>րիտոր)>հռետոր «ճարտասան, հռետոր», արամ. (ասոր.) sarnā, էբր. seren, sarnē>սեռն «առանցք» նն), **իրան. 1.-հյ.** (մ. պ., պ. rasan>ասասան, հն պրսկ.*parak, պ. para «կող» >պասակ, հն պրսկ.*pārāv, պ. pārāv>պասալ (-ունք, -անց), **իրան. razm>ռազմ, իրան. vičīr>վճիռ նն), հուն.-հյ.** (σύρρα, σύρρα>զմուռ, πόρνος «պոռնիկ»>պոռնիկ, ρήτωρ>հռետոր (-ի, -աց) նն), **լատ.-հյ.** (carrus>կարոք, basterna>բաստեռն «դեսպակ, գահավորակ» նն)}: Փոխառությունների այս ոչ ամբողջական ցանկից երևում է, որ օտար *r*-ն հայերենին անցել է թե՛ *p* (r)-ով, թե՛ *n* (r)-ով, իհարկե՛ *p* (r)-ի գերակշռությամբ:

Հ.-ե. *r-ի հայկական երկու ռեֆլեքսների՝ *p* (r) և *n* (r) հնչույթների ի հայտ գալը չի կարող որևէ փոխառու լեզվի ազդեցությամբ բացատրվել առնվազն երկու պատճառով. 1) նախ, որովհետև այն առկա է ոչ միայն փոխառությունների մեջ, այլև բնիկ հայերեն բառերում, որոնք, բնականաբար, ավելի հին են հայոց լեզվի բառային կազմում, 2) բոլոր հին լեզուները՝ ցեղակից կամ ոչ ցեղակից, որոնցից հայերենը վաղ շրջանում կատարել է փոխառություններ, տարբերակել են միայն մեկ տեսակի *r*՝ նայական կամ թրթռուն, հետևաբար այդ առումով ևս հիմքեր չկան *p* (r) ~ *n* (r) տարբերակումը փոխառու լեզուների ազդեցությանը վերագրելու:

Հիմքեր կան ասելու, որ *p* (r) ~ *n* (r) հնչույթային տարբերակումը սկսվել է հայերենի կազմավորման վաղ փուլում, թերևս՝ սկզբնային վաղնջականում: Դրա վկայությունները պիտի համարել *p* (r) ~ *n* (r) հնչույթաբանական հակադրությունները բնիկ հայերեն բառերում. բառի («բառ»-ի եզ. թ., սեռ.տր. հլ.) (<*bhā-s-ri) ~ բարի(-ոյ) (<*bheriġo-?) «լավ, ազնիվ», լուռ, -ի (<*klus-ro) «լռիկ, անխոս» ~ լուր,-ոյ (<*klu-ro-) «լսելը, լսողություն», հեռ, -ի, -ոյ (<(H)erso-) «հակառակություն, ոխ» ~ հեք-ու (<*peruti) «անցած տարի», ձառ (<*ǵ hr-s-) «ծուռ, տգեղ, կոշտ» ~ ձար, -ի (<*ǵ hēri-)¹ «մազ, մազեղեն», մուռ (<*mus-ro) «լուռ ու մունջ լսող» ~ մուր, -ոյ (<*mūr-ro)² «ծխի մրուրը», սեռ, -ի (<*ker-si-) «ազգ, ցեղ, տոհմ» ~ սեք (-եմ) (<*ker-) «աճել, սնուցանել», քառ, -ի (<(k)uř-s) «չորս» ~ քար, -ի (<*kar-) «1.կարծր ապար, 2. ակ»:

Ըստ ամենայնի, հ.-ե. *r-ի՝ երկու հնչույթի տրոհվելու գործընթացը ավարտված իրողություն էր նախքան մ. թ. X դարը, որովհետև *p* (r)-ն և *n* (r)-

¹ Տե՛ս Ջահուկյան Գ. Բ., ՀԼՊՆԺ, էջ 128:

² Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, III, էջ 362:

ն ինքնուրույն հնչույթներ էին հայերենի հնագույն փոխառություններում, ինչպիսիք են, օրինակ, խեթերենից կամ ակկադերենից կատարվածները¹: Լեզուներ, որոնց հետ հայերենի շփումները կատարված փաստ էին դեռևս մ. թ. շուրջ հազար տարի առաջ: *l* (r)-ի և *n* (r̄)-ի՝ որպես երկու տարբեր հնչույթների առաջացումը չէր կարող պայմանավորված լինել հայերենում հ.-ե. *r-ի վանկարարության հատկանիշի կորուստով, որովհետև՝ 1) չկան այդպիսի տիպաբանական տվյալներ. հ.-ե. ձայնորդները վանկարարության հատկանիշը կորցրել էին նաև հ.-ե. մյուս հին լեզուներում (բացառությամբ հին հնդկերենի), օր.՝ միջին պարսկերենում², բայց դա չի հանգեցրել հնչույթային ճեղքման, 2) հին հայերենում, ինչպես արդեն տեսանք, հ.-ե. վանկարար *r-ն ներկայացված է ինչպես *ար*-ով, այնպես էլ *առ*-ով:

Իհարկե, հ.-ե. *r-ի տրոհումը երկու հնչույթի՝ *p* (r)-ի և *n* (r̄)-ի, չէր կարող տեղի ունենալ կարճ ժամանակում. այն, թերևս, մի քանի հարյուրամյակ տևած գործընթացի արդյունք է: Որքան էլ որ լեզվական փաստերը միանշանակ եզրակացությունների համար բավարար հիմքեր չեն տալիս, այնուամենայնիվ տրամաբանական է կարծել, որ այդ գործընթացը սկիզբ է առել դիրքային բաշխման, այն է՝ ենթահնչույթային տարբերակման հիմքի վրա: Հետևաբար, *p* (r)-ն և *n* (r̄)-ն նախապես եղել են նախահայերենի *r-ի դիրքային տարբերակները, որը, ըստ ամենայնի, դրսևորվել է *m* (n) և *n* (n) ձայնորդներից առաջ (հմմտ. *(j)արմ-ար* (<*ar-m), *արմ(-ուկն)* (<*ar-mo-), *թարմ* (<*tr-mo-), *սերմ* (<*kerm-), բայց՝ *բեռն* (<*bher-no-), *բուռն* (<*bher-ni-?), *գառն* (<*garen-), *ձեռն* (<*ǵhesr-) ևն), այնուհետև համաբանությամբ տարածվել նաև այլ դիրքերում: Կարծում ենք՝ հոգուտ այդ տեսակետի են վկայում նաև հետևյալ ձևահնչույթաբանական հերթագայությունները. *առն* // *արանց*, *բառնամ* // *բարձի*, *դառնամ* // *դարձի*³, *դուռն* // *դրունք*, *ձեռն* // *ձեռք*, *ջեռնուլ* // *ջերմն* ևն: Եթե չլինեին *p* (r) ~ *n* (r̄) հնչույթաբանական հակադրությունները (հմմտ. *բար* ~ *բառ*, *դարն* «բարձր տեղ» («դար»-ի որոշյալ առումը) ~ *դառն*, *վար* (ք) «վարուցան»⁴ ~ *վառ* «վառած, փալփլուն»⁵, *բար* ~ *բառ* (քառորդ՝ «չորրորդ» բառի արմատը), *լուր* ~ *լուռ* ևն), ապա նույնիսկ դասական գրաբարի շրջանի համար վերոհիշյալ հերթագայությունները կդիտվեին

¹ Խեթական թագավորությունը կործանվել է մ. թ. ա. 1200 թ., իսկ մինչ այդ՝ շուրջ չորս դար, խեթերի թագավորությունը եղել է արևելյան Փոքր Ասիայի հզոր տերություններից մեկը և վարել է նվաճողական քաղաքականություն՝ մրցակցելով Եգիպտոսի հետ (տե՛ս *Десницкая А.*, *О хеттском языке* // *Фридрих И.*, *Краткая грамматика хеттского языка*, М., 1952, с. 3): Պիտի կարծել, որ խեթերենի և հայերենի շփումները սկսվել էին նախքան այդ պետության կործանումը:

² Տե՛ս *Расторгуева В. С.*, *Молчанова Е. К.*, *Среднеперсидский язык* // *Основы иранского языкознания: среднеиранские языки*, М., 1981, с. 20:

³ *Դառնամի* ավելի հին ձևն է **դարձնամ* (<*dhrǵh-nā-mi)(տե՛ս *Ջահուկյան Գ. Բ.*, *ՀԼՊՆԺ*, էջ 120), որը ցույց է տալիս, որ *p* (r) // *n* (r̄) հերթագայությունը տեղի է ունեցել է *ձ*-ի անկումից հետո, երբ *p*(r)-ն հայտնվել է *ն*(n)-ին նախորդող դիրքում:

⁴ Տե՛ս «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», Անթիլիաս, 1988, էջ 751:

⁵ Նույն տեղում, էջ 749:

ենթահնչոյթային, այսինքն՝ կունենայինք հնչունների հարացուցային փոխարկումներ հնչոյթի կազմում, այլ ոչ թե՝ ձևահնչոյթաբանական հերթագայություններ, այն է՝ հնչոյթների հարացուցային փոխարկումներ ձևահնչոյթի կազմում, որովհետև ինչպես հնչունաբանական, այնպես էլ ձևահնչոյթաբանական հերթագայության դեպքում իմաստի տարբերակում տեղի չի ունենում¹: Ըստ Է. Բ. Աղայանի՝ դասական գրաբարում *մ* (*m*) և *ն* (*n*) ռնգային ձայնորդներից առաջ *ր* (*r*) և *ռ* (*r̄*) նայականների ենթահնչոյթային բաշխվածության սկզբունքի խախտումներ են սպասելի *ր*-ի փոխարեն *ռ*-ի առկայությունը «քերականական ձևերում», ինչպես՝ *առումն-առման* («առնելը, վերցնելը»), փխնկ՝ **արման, զեռումն-զեռման* («զեռալը, վիտալը»), փխնկ՝ **զեռման*²: Ըստ իս, նույն երևոյթի արտահայտություններ պիտի համարել նաև *ամարան-ամառան* («ամառն»), *եղերան-եղեռան* («եղեռն»), *ոլորան-ոլորան* («ոլորն») գուգաձևությունները դասական գրաբարում:

Ինչպես արդեն նշվել է, առանձին դեպքերում հյ. *ր* (*r*)-ի համար հնարավոր են համարվել հ.-ե. վանկարար **ml̄-meno-?* > *մարմին*³, -ոյ) և ոչ վանկարար **l* (հմմտ. **khaʒəla-* (<**kaʒəla-*) > *խաղալարտ*? «պալար, ուռուցք»⁴) նախաձևերը, սակայն պարզ է, որ հ.-ե. **l̄*/**l*-ն չեն կարող *ր* (*r*)-ի հիմնական նախաձև կամ դրանցից մեկը համարվել թեկուզև այն պատճառով, որ ներառում են խիստ սահմանափակ թվով բառեր:

Մ (m) և ն (n) ռնգայիններ: Ինչպես արդեն նշվել է, հայերենի ռնգային ձայնորդները սերում են հ.-ե. համապատասխաններից: Մասնավորապես, առկա են հետևյալ անցումները. ա) հ.-ե. **m* > հյ. *մ* (*m*). հմմտ. **ambhi* > *ամբ* (ողջ), **māter* > հյ. *մայր*, **muntjo-* > *մունջ*, բ) հ.-ե. **m̄* > հյ. *մ* (հմմտ. **dhm̄b* > *դամբ-ան* / (-*արան*), **m̄b* (h) > *մնայ*, -ոյ), գ) հ.-ե. **n* > հյ. *ն* (*n*) (հմմտ.

¹ *Ձևահնչոյթի և ձևահնչոյթաբանական հերթագայությունների մասին տե՛ս Պետրոսյան Վ.*, *Ձևահնչոյթի և ձևահնչոյթաբանության լեզվաբանական կարգավիճակը* // «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՇ»), 2009, թիվ 3, էջ 96-105:

² **Աղայան Է. Բ.**, Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 185:

³ Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ, էջ 138: - *Մարմին* բառի **m̄*-*meno-?* նախաձև են նշում Հ. Հյուբշմանը (տե՛ս **Հյուբշման Հ.**, *Հայերենի քերականություն*, Երևան, 2003, էջ 473) և Հ. Աճառյանը (տե՛ս **Աճառյան Հ.**, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Երևան, 1940, էջ 62, *նույնի*՝ ՀԱԲ, հ. III, էջ 287): Հայերենից բացի, *ր* (*r*)-ով ձև ունի նաև հին հնդկ.-ը՝ *marmān-*, բայց, ինչպես արդեն նշվել է, հին հնդկ.-ի դեպքում *r*-ը հավասարապես կարող էր լինել ինչպես հ.-ե. **r-* ի, այնպես էլ **l*-ի ներկայացուցիչը: Ցեղակից մյուս լեզուներն ունեն *l*-ով ձևեր. հմմտ. լիտվ.՝ *melm̄n* «ողնաշար», լեթթ.՝ *melmeni* «ողնաշարի ծայրի մասը», հուն.՝ *μέλος* «անդամ, հոդ» են: Նշված իրողությունները հաշվի առնելու դեպքում հայերենի *ր* (*r*)-ի փոխարեն պիտի լիներ *ղ* (*l*)՝ **մարմին* (հմմտ. հյ. *մեղր* (-ու)- հուն. *μέλι*, լտ. *mel*, կիմբ., բրետ. *mel*, հյ. *մեղկ*- հուն. *μέλι* «հալում են», լատ. *mollis* «փափուկ», հն իռլնդ. *meldach* «քնքուշ» են): Ըստ էության, այս հանգամանքն էլ Գ. Ջահուկյանին հիմք է տվել հայերենի համար առաջարկելու **m̄*-*meno-?* նախաձևը: Հնարավոր է, որ այդ բառը նախահնդեվրոպական շրջանում գործառել է **m̄*-*meno-?* // **m̄*-*meno-?*, այսինքն՝ **r*/**l* ազատ հերթագայական տարբերակներով:

⁴ Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ, էջ 131:

*an ǵ hu->hj. *անձուկ*, *ǵ onu->hj. *ծուն-ը*, η) հ.-ե. *ն>hj. *ան* կամ *(ը)ն* (հմմտ. *ǵ n-nā-?>(*ճանաչ-ել*) *ճանաչ-ել*, *nǵho->hj. *ընդ*, *bhel-mn>hj. *բեղմ(ը)ն*, *xelūmnǵ >*գելում(ը)ն*): Բայց կան նաև տրամախաչումներ, այլ կերպ ասած՝ օրինաչափություններից շեղումներ, երբ հ.-ե. *n-ի հայկական համարժեքն է *մ*(m)-ն (հմմտ. *neg^u-ro-> *մերկ(-ն)*), *ǵ hijǵm>*ձիւն*), հ.-ե. *n-ինը՝ *ամ* (am)-ը (հմմտ. *nǵpǵ(u)los>*ամ-ուլ*, *nǵputriǵo->*ամուրի?*), գ) հ.-ե. *m-ինը՝ hj. *ն*(n)-ն (հմմտ. *dom->*տուն*, *dǵmu->*տանու(տեր)*, *k^uām>*քան* նն) և հ.-ե. *m-ինը՝ hj. *ան*(an)-ը կամ *(ը)ն*(ǵn)-ը (հմմտ. *sm₁-dǵru-?>*անտառ*, *sm₂-nu-mi?>*հանում(-ել)*, *dǵkm>*տաս(ը)ն*, *septm₂->*ելթ(ը)ն* // (*եալթ(ը)ն*) նն): Օրինաչափական անցումների թիվը էականորեն գերակշռում է, այսպես կոչված, «ոչ օրինաչափական» անցումների համեմատությամբ: Հմմտ. օրինաչափական անցումներ. *m>ւ՛ 168, *m>ամ՛ 10, *n>ն՛ 188, *ն>ան // *(ը)ն՛* 18. «ոչ օրինաչափական» անցումներ. *n>ւ՛ 1, *ն>ամ՛ 2, *m>ն՛ 9, *m>ան // *(ը)ն՛* 6¹:

Ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից կատարված փոխառություններում ևս ընդհանուր առմամբ պատկերը չի փոխվում. որպես կանոն՝ օտար n-ն հայերենում տառադարձված է ն-ով, իսկ m-ն՝ մ-ով {հմմտ. **ուրարտ.-hj.. n>ն** (*ebani>աւան* «գյուղաքաղաք, մեծ գյուղ»², *burgana* «բուրգ, բերդ, ամրոց»>*բուրգն*, *šani* «աման»>*սան* «կաթսա»), **m>մ** (*Erimena>Արմեն* (անձնանուն), *Menua>Մենուա* (անձն.)). **խեթ.-hj.. n>ն** (*harnamniǵa->խառն, խուռն*), **n>ւ** (*halanta->խալամ (հալամ* «անասունի չորացած զանգ»), **m>մ** (*Muršiliš>Մուշեղ*). **խուռ.-hj.. n>ն** (*hinzuri* «խնձոր»>*խնձոր*³, *nuranti* «նուռ»>*նուռն*). **իրան. լ.-hj.. n>ն** (ավ. *ā-sna->ազն*, մ.պ. *an-āpāt>անապատ*, մ.պ. *nēzak >նիզակ*, պ. *Nifāy>նուագ* «զավար, բաժակ» նն), **m>մ** (պրթ. *agāmāy*, մ.պ. *akāmak>ակամայ*, մ.պ. (ուշ) *mātyān>մատեան*, ավ. *mišti->միշտ* նն), **n>մ** (մ.պ. *hanbōh, anbōh>ամբոխ*), հուռ.-hj.. n>ն (*várhoos>նարդոս, նակուθոos>յակիինթ* նն), **m>մ** (*μάρμαρον>մարմար, στάμνος > ստոման* «հեղուկաման, սափոր» նն). **լատ.-hj.. m>մ** (*margarita>մարգարիտ*), **n>ն** (*panis>պան* «բլիթ, նկանակ»). սեմական լեզուներ-հայերեն. **n>ն** (ասոր. *būšīnā*, ակկադ. *bušīnum* «պատրույգ, աշտանակ, մոմակալ»>*բուծին*, ասոր. *arnāʾa>արնէտ*, ակկադ. *Nanāi>Նանէ* (անձն.)), **nn>ն** (արամ. *kinnārā*, ասոր. *kennārā*, եբր. *kinnōr>քնար* նն), **m>մ** (ասոր. *lūmā>լու-*

¹ Հաշվումներն ըստ **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ աշխատության 111-157 էջերի բառացանկի:

² Այս ստուգաբանությունը ևս առաջարկել է Գ. Ղափանցյանը (տե՛ս **Ղափանցյան Գ. Ա.**, ՀԼՊՆԺ, էջ 133): Հ. Աճառյանը hj. *աւան* բառը համարել է իրանական փոխառություն (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, I մաս, էջ 245): Եթե սկզբնական շրջանում Գ. Ջահուկյանի դիրքորոշումն այդ հարցում վճռական չէր (հմմտ. «Հյ. *աւան*-ը «ավան, բնակավայր» համարում են (ընդգծումն մերն է – Վ. Պ.) փոխառություն իրանական աղբյուրից ...», – **Джау-кян Г. Б.**, Урартский и индоевропейские языки, Ереван, 1963, с. 98), ապա ավելի ուշ նա վճռալորեն արտահայտել է տեսակետը, ինչ և Գ. Ջահուկյանը (**Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ, էջ 517):

³ Ստուգաբանությունը առաջարկել է Գ. Ղափանցյանը (տե՛ս **Ղափանցյան Գ. Ա.**, ՀԼՊՆԺ, էջ 112-113):

մայ «մանր դրամ», արամ. (ասոր.) *šōm*, *šōmā* > *ծով* «ծով պահել», արար. *mahja*՝ «ննջարան» > *մահիճ* «անկողին» նն), *m* > *ն* (ակկադ. *samādu*(m) «աղալ» > *սանդ*): Այսպես կոչված, «ոչ օրինաչափ» անցումները, ինչպես՝ *n* > *ւ*, *m* > *ն*, որակ չեն կազմում, ուստի և չեն խախտում սկզբունքը:

«Ոչ օրինաչափական» անցումներից որոշները բացատրելի են հնչարտաբերական գործոններով: Այսպես, * *ǵ* *hiǰōm* > *ճիւն* և **dōm*-(os) > *տուն* ¹ համապատասխանություններում հ.-ե. **m* > *hj*. *ն* հնչյունական անցումը կարող է պայմանավորված լինել հայերեն բառի կազմում ի հայտ եկած շրթնային *z*(*ǰ*)-ով, որի տարնմանական ազդեցությամբ էլ **m*-ն վերածվել է *ն*(*n*)-ի, որովհետև հայերենի հնչաշղթային բնորոշ չէ արտաբերության տեղով նույնական երկու հնչյունի արտասանությունը անմիջական հարևանությամբ²: Հայտնի է, որ հին հայերենի *ni*(*oǰ*) երկբարբառակերպը կարող էր սերել հ.-ե. երկար **ō*-ից (նաև կարճ **o*-ից, եթե նրան հաջորդում էր ոնգային ձայնորդ)³: Բսկ հ.-ե. * *ǵ* *h* > *hj*. *ճ*, հ.-ե. **d* > *hj*. *տ* անցումները համապատասխան հնչյունական օրենքների գործունեության արդյունք են: Սակայն **m* > *ն* (հմմտ. **d̥smu*-> *տանու*(*տէր*)), **m* > *ան*/ (*ը*)*ն* (հմմտ. **sm̥*-*d̥*eru-? > *անտառ*, **d̥skm* > *տաս*(*ը*)*ն*) կամ **n* > *ւ* (հմմտ. **neg*^u-ro-> *ւերկ*(-ոյ)) փոփոխությունների առնչությամբ առաջարկվող բացատրությունները կրում են խիստ վար-

¹ Պատմահամեմատական հայերենագիտության մեջ Ա. Մեյեի հետևողությամբ ընդհանուր առմամբ ընդունվել է այն տեսակետը, ըստ որի հայերեն բառը հ.-ե.-ի համեմատությամբ մեկ վանկով կրճատվել է նախագրային հայերենի վերջընթեր շեշտ ունենալու պատճառով (տե՛ս Meillet A., *Esquisse d'un grammaire comparée de l'arménien classique*, Vienne, 1936, p. 19, Ղափանցյան Գ. Ա., ՀԼՊՀԾ, էջ 228, Туманян Э. Г., *Древнеармянский язык*, М., 1971, с. 85): Ըստ Հ. Պեղերսընի՝ հին հայերենի բառային շեշտը եղել է երաժշտական, հետևաբար հայերեն բառի՝ ցեղակիցների (սանսկրիտ, հին հունարեն նն) համեմատությամբ մեկ վանկ պակաս ունենալու պատճառը ոչ թե վերջընթեր շեշտն է, այլ տոնի՝ քանակական շեշտով պայմանավորված փոփոխությունը (տե՛ս Պեղերսըն Հ., Հին հայերեն լեզուի շեշտը // *Պեղերսըն Հ.*, Նպաստ մը հայ. լեզուի պատմութեան, Վիեննա, 1904, էջ 68-74, ինչպես նաև Պետրոսյան Վ., Հայերենագիտության երկու հիմնահարց ըստ Հովգեր Պեղերսընի // «ԲԵՀ», Բանասիրություն, 2013, թիվ 141.2, էջ 38-53): Հին հայերենի բառային շեշտի բնույթի և գործառնությունի վերաբերյալ Ա. Մեյեից սկիզբ առած պատկերացումը ճշգրտելու առումով արժեքավոր են, մասնավորապես, Գ. Ջահուկյանի նկատառումները (տե՛ս Ջահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սիստեմը, էջ 150-159, Джаукян Г. Б., *Сравнительная грамматика армянского языка*, Ереван, 1982, с. 31-32): Ընդհանուր առմամբ Գ. Ջահուկյանի տեսակետին է հարել նաև Մ. Աղաբեկյանը (տե՛ս Աղաբեկյան Մ., Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր // Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Երևան, 1998, էջ 131):

² Իհարկե, ձևաբանական գործընթացներում այդպիսի կազմությունը հնարավոր է հմմտ. *անն* (եգ.թ., սեռ. հլ.)- *արամբ* (եգ. թ. գրծ հլ.), *անձն* (եգ.թ. ուղղ. հլ.)-*անձամբ* (եգ.թ., գրծ. հլ.), *հարսն* (եգ.թ., ուղ.հլ.)- *հարսամբ* (եգ.թ., գրծ. հլ.): Նշված դեպքերում գործում է հակառակ միտումը՝ շրթնային *բ*-ն առնմանական ազդեցության է ենթարկում *ն*-ին՝ արտաբերության տեղով նույնացնելով իրեն:

³ Տե՛ս Պետրոսյան Վ., Հին հայերենի ձայնավորական համակարգի ծագումը և հնչաբանական արժեքայնությունը // «ԲԵՀ», Հայագիտություն, 2017, թիվ 2, էջ 44-45:

կածային բնույթ: Այսպես, Ըստ Գ. Ջահուկյանի՝ հ.-ե. միասնության շրջանում *neg^h-ro- նախաձևը հավանաբար գոյություն է ունեցել նաև *m տարբերակով՝ *meg^h-ro-, այլ կերպ՝ գործել է *n/*m ազատ փոփոխական երևույթը, որով էլ կարող է բացատրվել բառասկզբի դիրքում *n>մ՝ անցումը¹: Կան մեկական օրինակներով ներկայացված այլ «շեղումներ» ևս, ինչպես՝ *n>լ (հմմտ. *x(i)n(d-?)>ghlun), *m>լ (հմմտ. *amōr>աւր, սեռ. աւուր), որոնցից հատկապես առաջինի հնչաբանական մեկնությունը առայժմ կարող է ունենալ միայն վարկածային բնույթ: Եթե m>լ(լ), նաև՝ m>b, m>p անցումները տիպաբանորեն կարող են բացատրվել այդ հնչույթների համար ընդհանուր շրթնայնացման հատկանիշով², ապա n>լ կամ n>v տիպի հնչույթափոխությունների համար անհրաժեշտ կլինի այլ մեկնաբանություն: Ուստի պատահական չէ, որ համեմատաբանական գրականության մեջ հաճախ բավարարվում են անցումների դիրքերը նշելով (բառասկիզբ, բառավերջ ևն)³: Այնինչ՝ ավելի կարևոր իրողությունների մասին, ինչպիսիք են հնչունակագմական յուրահատկությունները և ենթաշերտային (սուբստրատային) ազդեցությունները՝ լայն առումով, խոսվում է միայն ընդհանուր գծերով, որի հիմնական պատճառը փաստերի սակավությունն է և հակասականությունը, ինչու ոչ թերևս նաև մեթոդաբանական մոտեցումների անկատարությունը:

Դեռևս նախագրային հայերենում *ն*(n) և *մ*(m) ռնգայինները իմաստատարբերակիչ հակադրություններ են ձևավորել ոչ միայն այլ հնչույթների հետ (հմմտ. *գոմ*, -ոյ (<*ghomo) «փարախ, ախոռ» ~ *գոյ*, -ի (<*xosi) «էակ, արարած», *նուրբ* (<*(s)nōbh-ri-) «բարակ, նեղ, մանր, թեթև»⁴ ~ *ուրբ* (<*kubro-) «մաքուր, անարատ», *ծիւն*, -ի (<*ǵ en-) «ծնունդ» ~ *ծիղ* (-ոյ) / *ծիլ* (<*ǵī-lo-`gei-) «ծլել, ծաղկել» ևն), այլև մեկը մյուսի հետ (հմմտ. *բան*, -ի (<*bhā-ni-s) «խոսք» ~ *բամ* (<*bhāmi) «ասում եմ», *գամ* (<*ǵadh-mi)⁵ «գալիս եմ» ~ *գան* (<*ǵh- ?)⁶ «ծեծ», *կեամ* (<*ǵ^heǵā-(ə)?) «ապրում եմ» ~ *կեան*-(ք) (<*ǵ^hiǵ-nā-) «կյանք», *հում*, -ոյ (<*ōmo-) «չեփած, անեփ» ~ *հուն* (<*pont-) «անցք, բացվածք», *սիմ* (<*kem-) «կո-

¹ St' u Джаукян Г. Б., Очерки по дописьменного периода армянского языка, с. 235:

² Այդ տիպի հնչունական անցումներ արձանագրվել են ինչպես հնդեվրոպական, այնպես էլ ուգրա-ֆիննական, դրավիդյան, սեմական, մոնղոլական և խուռա-ուրարտական լեզվաընտանիքների լեզուներում (տե՛ս Серебренников Б. А., Вероятностные обоснования в компаративистике, М., 1974, с. 150-151):

³ St' u Meillet A., նշվ. աշխ., էջ 48: Հ.-ե. *m>hյ. *ն*(n) (հմմտ. *dōm->hյ. *սուն*) անցման առնչությամբ տե՛ս Աճառյան Հ., ԼՔՀԼ, հ. VI, էջ 509, *նույնի*՝ ԼՔՀԼ, հ. III, էջ 410: Ըստ Գ. Ջահուկյանի, այդ «մասնակի ձևափոխությունները ունեն հնչունաբանական և հնչույթաբանական պատճառներ, մասամբ էլ բացատրվում են ենթաշերտի ազդեցությամբ» (տե՛ս Джаукян Г. Б., Сравнительная грамматика, с. 44):

⁴ St' u «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», էջ 626:

⁵ St' u նաև Աճառյան Հ., ՀԱԲ, Ե., հ. I, 1971, էջ 500:

⁶ Նաև՝ *ǵ^hhen-՝ *ǵ^hhon- «խփել» արմատից (տե՛ս Ջահուկյան Գ., ՀԱԲ, էջ 149):

թող»¹ ~ *սին* (<*kēno) «փուչ, դատարկ», *քաւ* (<*qm̥- *qem-) «քամվածք, քամուկ» ~ *քան* (<*q^hām-/*q^hān-) «չափ, քանակ» են): Ըստ էության, միայն բնիկ հայերեն բառերի սահմաններում իրականացված տարբերակիչ գործառնություն էլ բավարար է, որպեսզի ճանաչվի *ն* (n) և *մ* (m) ռնգայինների հնչյոթային կարգավիճակը հայերենի ձևավորման վաղ փուլում՝ վաղնջահայերենում: Բնական է, որ նրանց՝ որպես իմաստատարբերակիչ միավորների հնչյոթաբանական դիրքերը մինչև գրաբարյան հայերեն զարգացման ճանապարհին ամրապնդվում են ի հաշիվ այն մեծաթիվ փոխառությունների, որոնք ավելի քան երկու հազարամյակի ընթացքում հայոց լեզուն կատարում է այլ լեզուներից: Դրանց մեջ մեծ է հատկապես իրանականների տեսակարար կշիռը (հմմտ. *սպուտ* «ավար, կողոպուտ» (<իրան. *apurr-*) ~ *սպուր*² I «փրկություն, ապրելը», - *աշխար* (-ել) «լաց» (<իրան. *axšaδ) ~ *աշխատ* «հոգնություն» (<իրան. *axšāt), - *բոյր* (<իրան. *bōd) ~ *բոյն* (<հ.-ե. *bheu-no` bheu- «աճել, լինել») ~ *բոյծ* «սնուցում» (հ.-ե. <*bheu ḡ - «վայելել, ուտել»³), - *դէմ* (<իրան. *dēm*(>դիմակ)) ~ *դէտ* (<իրան. *dēt? (>դիտել)), - *մոյր* (-ոյ) «մուրացկանություն» (<իրան. *mōd) ~ *մոյկ* «կոշիկ» (<իրան. *mōk) ~ *մոյն* «բարեձևություն» (<հ.-ե. *mou-no), - *նախ* (<իրան. *navx/*nauh/x*) «առաջին» ~ *վախ* II (վահ), -ի, -ից, «անդունդ»⁴) և այլն: Այլ կերպ, եթե վաղնջահայերենի փուլում ինչպես *ր* (r)-ն և *ռ* (r̥)-ն, այնպես էլ *ն*(n)-ն և *մ*(m)-ն կարող են համարվել «թույլ հնչյոթներ»⁵, որքանով որ նրանք դեռևս փոքր թվով բառեր են տարբերակում, ապա գրաբարյան փուլում այդպիսի բնորոշումը հազիվ թե կարող է տեղին համարվել:

Այսպիսով, 1) հին հայերենի *ր* (r) և *ռ* (r̥) նայականները սերել են հ.-ե. *r-ից՝ վերջինի տրոհումով երկու հնչյոթի. 2) ըստ ամենայնի՝ *սկզբնային վաղնջականի* փուլում *ր* (r)-ն և *ռ* (r̥)-ն միմյանց նկատմամբ գտնվել են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ՝ որպես միևնույն հնչյոթի՝ <*R>-ի դիրքային տարբերակներ (ենթահնչյոթներ). այդ երևույթը դրսևորվել է, մասնավորապես, *մ*(m) և *ն*(n) ռնգայիններին նախորդող դիրքերում. 3) *ր* (r) և

¹ Իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ Գ. Ջահուկյանն այս բառը ներառում է բնիկ հայերեն բառերի ցանկում (տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ, էջ 131), սակայն «Հայերեն ստուգաբանական բառարանում» համարում է անհայտ ծագման բառ (տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 679):

² Ստուգաբանորեն կապված է *սպուրծ* արմատի հետ՝ *սպուր+ծ* (աճակ.) կազմությամբ (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀՄԲ, I, էջ 239): Ըստ Գ. Ջահուկյանի՝ թերևս ենթաշերտային բառ է (տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 70):

³ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 135:

⁴ Ըստ Գ. Ջահուկյանի՝ «թերևս փոխառություն իրանական աղբյուրից» (տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 701):

⁵ Ռ. Ի. Ավանեսովը այդպես է անվանել թույլ դիրքերում փոքր քանակությամբ «հնչյունական միավորներ» տարբերակող հնչյոթները, ի տարբերություն ուժեղ դիրքերում առավելագույն քանակությամբ «հնչյունական միավորներ» տարբերակողների, որոնց տվել է «ուժեղ հնչյոթներ» տերմինային բնորոշումը (տե՛ս **Аванесов Р. И.**, Фонетика современного русского литературного языка, М., 1956, с. 29):

ռ (*ř*) նայականների հնչույթայնացման գործընթացը, որը, պիտի կարծել, սկիզբ է առել *ուշ վաղնջականի* սկզբնավորման փուլում, հանգեցրել է նրանց վերջնական տարանջատման երկու ինքնուրույն հնչույթների. 4) հայերենի հնագույն (խեթա-լուվական և ակկադական) փոխառությունները վկայում են, որ *ռ* (*r*)-ի և *ռ* (*ř*)-ի հնչույթայնացման գործընթացն ավարտվել էր առնվազն մինչև մ. թ. ա. X դարը. 5) *ւ*(*m*) և *ն*(*n*) ռնգայինները սերում են հ.-ե. համապատասխաններից, այն է՝ **m*>*ւ*, **n*>*ն*: Ինչպես բնիկ հայերեն բառերում, այնպես էլ տարբեր փոխառություններում տեղ գտած *m*>*ն* և *n*>*ւ*, ինչպես նաև այլ կարգի հնչունական անցումները որակ չեն կազմում, հետևաբար չեն կարող ազդել ընդհանուր օրինաչափության վրա. 6) հայերենում, ինչպես և ցեղակից լեզուների մեծ մասում, հ.-ե. վանկարար ձայնորդները չեն պահպանվել. դրանք արտացոլվել են «ձայնավոր+ձայնորդ» կաղապարով և, ըստ էության, հայերենի հնչույթային համակարգի տեսանկյունից հատուկ կարևորություն չեն ներկայացնում:

Вардан Петросян – Происхождение и фонематическая значимость древнеармянских плавных *ռ* (*r*), *ռ* (*ř*) и носовых *ւ* (*m*), *ն* (*n*)

Фонематические соответствия как исконно армянских слов (индоевропейского происхождения), так и родственных и неродственных с ним языков показывают следующее: 1) древнеармянские плавные *ռ* (*r*) и *ռ* (*ř*) произошли от и.-е. **r* путем расщепления последнего на две фонемы, а носовые *ւ* (*m*) и *ն* (*n*) – соответственно от и.-е. **m* и **n*; 2) распад и.-е.**r* произошел в конце *начального древнего периода протоармянского языка*, либо на стадии первоначального формирования *позднего древнего периода протоармянского языка*; до этого же их связывали субфонемные отношения; 3) ранние армянские заимствования (хетто-лувийские и аккадские) свидетельствуют о том, что фонологизация плавных *ռ* (*r*) и *ռ* (*ř*) была завершена до X в. до н.э.; 4) и.-е. слогаобразующие сонорные- **r*, **l*, **m*, **n*, перешли в армянском языке в сочетания «гласный+сонорный», потому с точки зрения фонологической системы древнеармянского языка и не имели существенного значения.

Vardan Petrosyan – The Origin of Old Armenian Liquids *ռ* (*r*), *ռ* (*ř*) and Nasal Sonants *ւ* (*m*), *ն* (*n*) and their Phonemic Value

The sound correspondences between native Armenian words (of Indo-European origin), as well as those of related and non-related languages reveal that 1) Old Armenian liquids *ռ* (*r*) and *ռ* (*ř*) stem from the Indo-European **r* by splitting the latter into two phonemes, and the nasal consonants *ւ* (*m*) and *ն* (*n*) come from the Indo-European **m* and **n* respectively; 2) the splitting of the Indo-European **r* took place in the later period of early ancient or at the beginning of the late ancient period. Before the splitting they were in a sub-phonemic relationship. 3) The early Armenian borrowings (Hittite Luwian and Akkadian) suggest that before the 10th century B.C. the phonemization of sonorants *ռ* (*r*) and *ռ* (*ř*) had already been completed; 4) Indo-European syllabic sonorants **r*, **l*, **m*, **n* turned into vowel + sonorant combinations, hence, did not have any significant role from the perspective of Old Armenian phonemic system.